

ըսել, որ կը սիրահարի այդ բառին: Ահա՛ այս մանուկը ապագայ լեզուաբանն ու բանասէրն է, մինչդեռ ուրիշ մանուկներ կարգաւ ու գրել կը սորվին միայն իրենց անմիջական պէտքին ի գոհացում: Այս ալ որակական տարբերութիւնն է:

Ըստ որում այս տարբերութիւնը իրողութիւն մըն է, ուրեմն անհրաժեշտ է այն նկատի առնել՝ ուսանողները դասարաններու բաժնելու ատեն: Մտքի բացառիկ կարողութեանց տէր ուսանողները պէտք է զատուլ միւսներէն և առանձին հոգածութեամբ պէտք է ջանալ որ անոնք իրենց ճաշակին, փափաքին ու կարողութեանց տեսակին համաձայն հետեւին այն ուսմանց որոնց սիրահարած են, և յափշտակուին ու գրաստին ատենցմէ: Ահա՛ այս է պատգամը արդի մանկավարժութեան սոյն հարցին շուրջ: Արդէն այս ուղղութեամբ նորանոր գաստարաններ կը կազմուին Ամերիկայի աշխարհային կեդրոններուն մէջ: Մասնաւոր գաստարաններու գատուած տաղանդաւոր ուսանողներ գրեթէ անհատական գաստիարակութիւն կ'ստանան՝ տաղանդաւոր գաստտուի մը վերին առաջնորդութեան ներքեւ: Դիտուած է որ նոյն խի նախակրթարանի ուսանողներ, ոչ միայն ուսմանց տարրական առարկաներուն տիրացած են, այլև սկսած են մխրճուիլ ուսմանց խորին նրբութիւններուն մէջ. սմանք ինքնաբերաբար թուարանական խրթին հարցեր լուծել կը ջանան, ուրիշներ՝ օտար լեզուներու գաղտնիքը թափանցել կը ճիշդին, այլք երաժշտական զործիքներու և նօթերու դժուարին արուեստին հետամուտ կը լինին, խի քիչեր ալ կը բանաստեղծեն ու կը վիպագրեն: Հանճարներու աշխատանոց մըն է պարզապէս մասնաւոր կերպով կազմուած այս դասարանները: Ամերիկա բացառիկ ճիգ կը թափէ իր հանճարեղ զաւակներուն հանճարը յերեան բերելու: Վասնզի տաղանդաւոր մանուկները սակաւաթիւ են, և զանոնք զուրգուրալիբ հոգածութեամբ խնամել թանկագին ծառայութիւն մըն է հայրենիքին ու մարդկութեան: Փանզի վաղուան հնարիչները, մեծ բանաստեղծները, հանճարեղ իմաստասէրները, վերջապէս մարդկութեան սրատես առաջնորդները կուտան են զալ այս դասարաններէն դուրս, պայմանով որ անոնց

տրուած գաստիարակութիւնը լինի առողջ, լուսամիտ, և հոգեբանական սկզբունքներու վրայ հիմնուած:

Մենք ալ, իբրեւ ազգ, թէև փոքր, միթէ չունինք կարեւոր թիւով տաղանդաւոր մանուկներ: Ի՞նչ բացառիկ պատեհութիւններ կ'ընծայենք անոնց ուղիղ գաստիարակութեան համար:

Ս Ի ՈՒՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

ՍԻՈՒՆԻ հրատարակութեամբ լուր խանդավառ ընդունելութիւն մը գտաւ ԹԻՖԼԻՍԻ Լաւոյով կ'աւանդուող երեւելի աւագնի աւանդաւոր աշխարհագրագէտ ԳԱՆՆԱՅԻ:

Ք ՍԻՈՒՆԻ վերերեւումը անհրաժեշտ պէտք մըն էր, հին և նոր նիւթերու ամպար է երուսաղէմ իր Մատենադարանով եւ Ս. Գատրիարքի մտքի ճոխ և բազմակողմանի պաշարով:

Հալէպ

ՍԱՀԱԿ Բ. ՎԹ. ԿԻՆԿԻՈՅ

Ք Փան հինգ տարի առաջ այդ վանքէն գուրգուրոտ հոգի վանական մը, կը խնդրէր որ իմ ԲԱԶՄԱՎԷՊԻ մէջ հրաւեր կարգայի որ երուսաղէմի Միտարանները զարմեալ վերակեն հրատարակել ՍԻՈՒՆԻ: Ես կարգացի այդ հրաւերը, որուն ձայնը դուք կը լսէք, և արդ կը ձեռնարկէք վրստահ յոյսերով: Կը հրաւիրէք զիս աշխատակցելու. — սիրով եւ յօժարութեամբ:

Ազոյթ

Հ. Ս. ԵՐԱՄԵԱՆ

Ք Հայաստանի ազէտէն ցնցուած սրտիս համար սիրովանք մեղաւ լսելս թէ որոշած էք յարուսթիւն տալ ՍԻՈՒՆԻ: Դուրեան-Վիւլէսէրեան-Նըշանեան երրորդութիւնը պիտի կարենայ առաջնակարգ դիրք մ'ապահովել այդ գրական փիւնիկին, և պիտի ջանամ աշխատակցել, երբ առողջական վիճակս ներէ: Հիւանդանոցի տագնապներս շատ տկարացուցին զիս:

ՍԷՄ ԺԱՆԴԵՐ

ՍԻՆԱՍ ԶԵՐԱԶ

Ք Ենթահակութիւն ՍԻՈՒՆԻ աշխատակցելու Ձեր հրաւերին համար, կը հաւատամ թէ այլապէս եւ էապէս չ'ողբնունջ պիտի ըլլայ իր բովանդակութիւնը արդէն, և պատահաբար անոր բերելիք իմ աջակցութիւնս ոչինչ պիտի աւելցնէ իր արժէքին վրայ, զոր Դուրեան Սըրբազան, դուք եւ ուրիշ հոգեւոր հայրեր պիտի տաք անոր ա՛յնքան ձեռնհասօրէն:

Փանիրէ

ՎԱՀԱՆ ԹԵՔԵԱՆ

Ք Շատ ուրախ եմ որ երուսաղէմի պատրիարքութիւնը վերջապէս իր անուան եւ համբաւին համապատասխան հայագիտական հանդէս մը, որ բնականաբար քիչ մը աւելի կրօնաշունչ պիտի ըլլայ, հրատարակելու ձեռնարկած է: Ուրախ եմ մանաւանդ որ այս հանդէսը Դուրեան Սըրբազանի

պատրիարքութեան օրով եւ Ձեր խմբագրութեամբ լոյս կ'ընծայուի: Երուսաղէմէն դիւրքը, Ս. Յակոբեանց վանքին ներկայ դիմակը եւ Ձեռագրերու Մատենադարանին հոստութիւնը հրամայօրէն կը պահանջէին այսպիսի հանգէսի մը հրատարակութիւնը: Երուսաղէմէն:

Պետրոս

ՏԲԹ. 3. ԹՕՓՃԵԱՆ

Յ. 1905 եւ 1906 տարիներուն ինքնակաշիւ կ'ընդհատուի, իսկ պատանի տարիներու, շատ անպատ անունը տուաւ. այդ կրօնականութիւնը հաւաքածոյները ինքն շատ սիրելի յիշատակներ են, միշտ սեղանին մօտ: Սիմոն, պիտի չուշանայ տալու հասուն տարիքիս, մօքի եւ հոգիի անուշիւր: Շատ, շատ ուրախ եմ որ ի մօտոյ պիտի վերհրատարակուի Սիմոն:

Հալէպ

ԱՐՏԱԽԱՋԴ ՎՐԴ.

Յ. Շատ ու շատ ուրախացայ Սիմոնի համար՝ որ կենդանի շուշուրով պիտի վերականգնի Ամասնորի առիթով: Սրտանց կարողութիւն կը մաղթեմ Ձեզ: Ինչպէս այս յոյժ կենսական ձեռնարկի նկատմամբ ունեցած խոր համակրանքին՝ անմիջապէս կը ներփակեմ առաջին բաժանորդներու անուանացանկ մը եւ կը խոստանամ՝ եթէ ժամանակս ներէ՛ իմ համեստ մասնակցութիւնն ալ բերելու Սիմոնի խմբագրութեան գործին: Կը յուսամ թէ Սիմոն պիտի վայելէ մեծ համակրութիւն եւ պիտի արթնցնէ քաջալերական հետաքրքրութիւն: Ձեր կրտսեր եղբայրը իր կարելիութիւնով պիտի ընէ զայն ծաւալելու մեր ժողովուրդին մէջ, այն խորունկ հաւատքով թէ ան մեր հոգեւոր կենսութիւն մէջ պիտի կրնայ կատարել ինչն անհրաժեշտ է: Դժբերութիւնները ինչպէս որ անհրաժեշտ է Գործին գլուխ գոնաւորները առաւելապէս այդ հաւատքը կը ներշնչեն մեզ: Գաթ Գիւլ (Կ. Պոլիս) ԳԱՐԵԳՆ ԵՄՍ. ՏՐԱՊԵՏՈՒՆ

Յ. Սիմոնի վերհրատարակումը քաջալերական է եւ ուրախացուցիչ կրկնակ տեսակէտներով. առաջին՝ անով շայն յարաբերութեան մէջ պիտի մտնէ իր շատ սիրած Երուսաղէմի հետ. անորմով պիտի հետաքրքրուի եւ անոր հետ բարոյական յօգով մը պիտի կապուի: Երկրորդ՝ ներկայ լրագրական թոշուրոն մէջ շայն պիտի ունենայ ամսագիր մը, որ հեռու կուսակցական ծանօթագրութիւն վէճերէ ու պոռնութիւններէ, իր գրքը լաւագոյն պիտի կատարէ, եւ ինչպէս որ կ'ըսէք Ձեր խմբագրութեան մէջ «անոյ լոյս մը հեղու բարեպաշտ հոգիներու մէջ», թարգման ու փաստարան ըլլայ ողջամիտ գաղափարներու շայն ժողովրդին մէջ:

Նիկիոսիս

ՊԵՏՐՈՍ ԱՐԹԵՄՍ ՍԱՐԱՃԵԱՆ

Յ. Սիմոն, ամսականութիւն վերերեւումը անտարակոյս գոհունակութեամբ պիտի ողջունուի բոլոր բարեպաշտ ազգայիններու կողմէ:

Միլան

ՕՆՆԻԿ ՏԻԼԻՍԵԱՆ

Յ. Կը ներփակեմ երկու քերթումը Ձեր ամսագիրին համար ու կը խնդրեմ որ հաւատարմայն ուրախութեանը զօր կը զգամ՝ տեսնելով զար-

թումը գեղեցկապատ լոյսին որ Արուեստին ու Գրականութեան Արեւէն կը բղիթ:

Գաթիւ

ԱՐՄԵՆ ԵՐԿԱԹ

Յ. Կը յուսամ եւ կը սիրեմ տեսնել թէ Սիմոն իւր վերածնունդով պիտի ընդգրկէ իւր նախնի (1868) ուղղութիւնն խմբագրութեամբ Մ. Մառութեանցի, Ս. Խաչատրեանի եւ Մամբրէ վ. Մարկոսեանի, եայլնի բարձր դիմակին: Այժմ ալ նոյն փափաքով կը փարիմ Ձեր պատուարեր եւ ազգօգուտ թերթին, յուսալով որ պատեհ առիթը չի պիտի կորսունցունէ պաշտպանելու մեր Հայաստանեայց Սրբազան Հարց Ս. Եկեղեցին . . . եւ մաքրափէլ իւր հալածիչներուն դէմ:

Ալեք Օպէն

ՄԻՆԵՐԱՍ ԹԵՆԿԵՐԵԱՆ

Յ. Սրտաբախ կը շնորհաւորեմ եւ կը քաջալերեմ Սիմոնի նորին լոյս տեսնելը Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Մայրափառքի Տպարանէն: Կը հաւատամ որ ամէն շայն ընտանիք, ամէն տեղ եւ ամէն երկրի մէջ պիտի ջանայ քաջալերել այս Ձեր բարի ձեռնարկը՝ բաժանորդագրութեամբ, գործակցութեամբ եւ նիւթապէս ծաւալելով Սիմոնը բոլոր Հայութեան մէջ: Տէր օրհնէ Ձեր կրօնական բարի ձեռնարկը:

Շիմկա

ՍԱՐԳՏԻՃ Կ. ԱԼԻՍԱՆԵԱՆ

Յ. Սրտի անխառն բերկրութեամբ կ'ողջունեմ Սիմոնի նոր հրատարակութիւնը . . . որ կոչուած է մեծ պակաս մը լինելու մեր ազգային կենսութիւն մէջ: Ձեր ողջամիտ առաջնորդութեամբ փառահիմ որ այդ հանգէսը լիովին պիտի ծառայէ իր նպատակին: Ուրախութեամբ պատրաստ եմ բերելու իմ ալախատակցութիւնս . . . Ամէն կողմ պէտք է փրօփականաւ ընել Սիմոնի համար, թէ՛ խօսքով եւ թէ՛ գրչով, զայն տարածելու միջոցներէն մէկն է:

Նիւ Եւր

Մ. 3. ԹԻՐԵԱՆԵԱՆ

Յ. Ուրախութեամբ կը լսեմ թէ յառաջիկայ նոր Տարիէն սկսեալ Սիմոն թերթը պիտի հրատարակէ Սիմոնի մէջ: Օրհնեալ ձեռնարկ մը որ կարծես իր վսեմ նպատակին մէջ անգամ մըն ալ կուգայ բովանդակ Հայութեան ուղղութիւնը հրաւիրելու դէպի Սոցիալական մեր Մայրափառքը, որ տարիներ առաջ ասուպի պէս երեւցած ու կորսուած էր նոյն թերթին հրատարակութիւնը:

Հալէպ

ՄԱՐՏԻՃ ԹՆՅ. ՍՈՒՐԱՍԵԱՆ

Յ. Հանդէսիդ խմբագրութեան նուիրուած ընտրանի հոյ մը հաւատաւոր, գաղափարապաշտ, գեղապէտ, հմուտ եւ շնորհալի գրիչներ լիայոյս եմ, Սիմոնի պիտի ապահովեն գերազանցօրէն բարձր եւ նախանձելի այն զերը, զոր պէտք է ունենայ, սրբութեան, խաղաղութեան, հաւատքի եւ ներշնչումի քաղաքին մէջ, որ Երուսաղէմն է, հրատարակուող թերթ մը: Ձկայ, բայց չուրի մը զբախտաբար մեր Հայրենիքին, վայր մը որուն, իբրեւ հզօր մագնէտի մը, ինքնաբերաբար զարժան ըլլայ մարդկութիւնը, ո՛րքան Երուսաղէմը: Անգուցական ինչ բախտ եւ հրաշալի ինչ իրողութիւն: Ուրիշներ անուն հա-

բնութիւն, ճիշդ ու ջանք կը վստահեն իրենց հրաւիրելու համար ուշադրութիւնն ու հետաքրքրութիւնը անոնց, որոնց պէտք ունին իրենց սեղանի նպատակին յաջողութեանը համար: Ս. Փաղաքին անունն ու հմայքը՝ արդէն սերտիւ կապած է իրեն հոգեբանական մարդկութեան: Իրադրութեան, Սիրոյ, Հասարակի եւ Մշակութեան մարմնի մերանոց հոգեբանութեան ցէթ, որ հո՞ն եւն յառած, պէտք է ծորէր երկնային քաղցրութիւնը, որով օծուած են Ս. Փաղաքին օղն ու ջուրը, հողն ու քարը, երկինքն ու երկիրը:

Թանկ (Աղեմաղորդ) ՀԱՅԿԱՋՈՒՆ ԲՆՅ, ՈՍԿԵՐԻՉԵԱՆ

Յ. Սրտագին խնդակցութիւնս կը յայտնեմ Ձեր Նոր ՍԻՈՆին համար, որ կը յուսամ լոյս կը տեսնէ մօտեքս: ԿՈՉԵԱՆԻՆ մէջ ծանուցումը զրկեք արդէն: Թերթին յաջողութեանը համար ինչ որ կրնանք՝ Կ'ընենք ուրախութեամբ:

Նիս Ետք

Խ. Կ. ՊԵՆԵԵԱՆ

Ս. ՅԱՎՈՐԻ ՆԵՐՍԷՆ

ՍՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐԺ ԶՈՐ ԱՊՔԻՆՈՒՄՇ

ՍԻՈՆԻ Բ. ԲԻԼԻՆ մէջ թաղութեամբ տեղեկացրած էինք թէ Ս. Պատրիարք Հայրը Յունդար Զ Լե իրիւր զգեստնուած է շանթահարիչ հիւանդութեամբ մը:

Այսօր սրտագին ցնծութեամբ կ'արձանագրենք թէ Ս. Պատրիարք Հայրը, լուրջ առաջնապետի անցնելէ ետքը, գահութիւն Աստուծոյ, մըտած է ապաքինումի շրջանին, եւ կը յուսանք թէ ՍԻՈՆԻ յաջորդ թիւին մէջ բախտը պիտի ունենանք աւետիկ, Փրկիչ Ս. Յարութեան աւետիսին հետ, Ն. Ամեն. Սրբազնութեան կատարեալ առողջութեան լուրն ալ:

Ս. Պատրիարքին այս զմեղակ հիւանդութիւնը ո՛չ միայն տիրութեամբ համակեց Ս. Յակոբեանց բովանդակ Միաբանութիւնը, ո՛չ միայն երուսաղէմի Հայութիւնը, այլ նաեւ Ն. Ամեն. Սրբազնութեան եղբոր տունը, մօտաւոր եւ հեռաւոր բոլոր ծանօթները, բարեկամները եւ աշակերտները, որոնք հեռագիրներով եւ նամակներով, յաճախ տեղեկութիւններ ուղղեցին Սրբազան Հիւանդին վիճակին վրայ:

Այս տիւրը պարագան առիթ մը կ'ուս որ վրէժապետութեան եւ համակրանքի ընդարձակ արտայայտութիւններ ուղղուին Սրբոց Յակոբեանց Աթոռին եւ ատոր արժանընտիր Գահակալին:

Երուսաղէմի քրիստոնեայ եկեղեցիներուն բոլոր հոգեւոր պետերը, հետաքրքրուեցան Հայոց Պատրիարքի հիւանդութեամբ եւ մաղթանքներ ըրին Անոր փութանակի ապաքինման համար:

Երուսաղէմի Անկիւրան Եպիսկոպոսը Գեր. Մէկինէս, մասնաւոր աղօթքի կարգադրութիւններ բրաւ իր եկեղեցւոյն մէջ Ս. Պատրիարքի բժշկութեան համար: Պաշտօնախնի Բարձր Բժիշկը Լորտ Բլուսը իր անձնական բժիշկը զրկեց Սրբա-

բազան Հիւանդին վիճակին վրայ ստոյգ տեղեկութիւններ առնելու համար: Երուսաղէմի վսեմ, Կառավարիչը անձամբ եկաւ Պատրիարքարան եւ իր համակրանքը յայտնեց Հայոց մօտաւորական Պատրիարքին հանդէպ: Կրպորտի Կառավարիչ Զին. Հրամանատար Սրբ. Խ. Սթօրս հեռագրով լուր ուղղեց:

Եղիպատսի Առաջնորդ Թորգոմ Սրբազան Գահիւնէն անձամբ եկաւ Երուսաղէմ Ս. Հիւանդին այցի համար: Հ. Բ. Լ. Մ. Ի Եղպոս. Շրջ. Յանձնաժողովը հեռագրով եւ նամակներով հետաքրքրուեցաւ Միութեան Բարեբաւ Անդամին առողջական վիճակով:

Պոլսոյ, Հալէպի եւ ուրիշ եկեղեցիներու մէջ հսկումի աղօթքներ կատարուեցան: Իսկ Կիլիկիոյ վեհ. Կաթողիկոսը, Պոլսոյ Պատր. Տեղապահը, Երուսաղէմի Փոխանորդը եւ Հալէպի Գեր. Առաջնորդը հեռագիրով եւ մասնաւոր նամակներով տեղեկութիւններ ուղղեցին:

Ս. Յակոբեանց Տաճարին մէջ երեք անգամ Հսկում կատարուեցաւ, որուն մասնակցեցան Միաբանութեան բոլոր ներկայ անդամները, բոլոր ժառանգաւորները, ժողովուրդի խառն բազմութեան հետ, եւ սրտաբախ յաղիչ աղօթքներ մատուցուեցան: Սրբազանին բժշկութեան համար իսկ միւս կողմէն գիտութեան մարդիկ իրենց բոլոր հմտութիւնը, տաղանդը եւ փորձառութիւնները ի գործ դրին՝ կոտեւելով 30 տարեթիւն առիթով մանրէներուն դէմ եւ վերջապէս փճացուցին անեղ միլիարներով համրուող բանակները:

Մայրաքաղաքիս երկու բժիշկները Տքթ. Վահան Փասթալ եւ Տքթ. Ն. Եսողեան մեծ անձնութիւններով զարմանեցին Ս. Պատրիարքը:

Եւ այսօր ուրախ ենք որ Աստուած լսեց ամէն կողմէ իրեն ուղղուած սրտագին աղօթքները, որոնց բժիշկներուն ջանքերը, եւ Սրբազան Հիւանդին արժէքաւոր կեանքը շնորհեց Ս. Աթոռին եւ Հայոց եկեղեցւոյն:

Կատարեալ ապաքինումը այլեւս ժամանակի եւ խնամքի խնդիր է:

ԿԱՐԵՒՈՐ ԱՋԴ

ՍԻՈՆԻ խմբագրութիւնը պատճառ կ'զգայ յայտարարել իր ընթերցողներուն թէ իրեն չուղղեմ այնպիսի ծանուցումներ եւ թղթակցութիւններ, որոնք օրաբերեալ միայն կը յարմարին: ՍԻՈՆ, ամառներ մը է, հետեւաբար իր ծրագրէն դուրս եմ ծանուցումներու յայտարարութեանց եւ մամբ մամբ լուրերու, թղթակցութեանց եւ առհասարակ **սեղաններու** բոլոր ճիւղեր:

Գահնայ բոլոր անոնք որ ինքնաբերաբար յղուած կամ բերուած կ'աղղեն մեզ ՍԻՈՆԻ մէջ հրատարակուելու խնդրանքով, թող բարեմանին նպատակէ իր զրկուածները արժէ մը կը ցերեպացնեն, կը հրատարակուին պատճառ տալով, հակառակ պարագային ձեռագրներ վար կը դրուին եւ անձեւեւան կը բողոքին այլ առիթ վրում նամակներն ալ:

Տպարան Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ